ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե-27

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21» հունվարի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա,, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Վիկտոր Կատվալյանի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված 81.772.900 (ութսունմեկ միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, Ծրագրի առաջադրանքը, *այդ թվում՝ նպատակը*, օրացուցային պլանը, *այդ թվում՝ ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները*, նախահաշիվը և կատարողների մասին տեղեկությունները ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի **2.4** կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել Պայմանագրի 6-րդ մասով նախատեսված տուգանքը,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 ՀՀ ԳԱԱ կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 ՀՀ ԳԱԱ գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.3.3 ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից Ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել ՀՀ ԳԱԱ կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6 ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում ՀՀ ԳԱԱ ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 25-ը:

3 Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 81.772.900 (ութսունմեկ միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ:

4 Մոնիթորինգ

4.1 ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.4 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և արվում են առաջարկություններ:

5 Վճարման կարգը և ժամկետները

5.1 ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 ՀՀ ԳԱԱ-ն Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

6 Կողմերի պատասխանատվությունը

Պայմանագրով և Ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված Միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված Միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7 Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8 Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9 Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք.Երևան, Գ. Լուսավորչի 15
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024115 ՀՎՀՀ 00005673	ՀՀ Կենտրոնական գանձապետարան հ/հ 900018005489 ՀՎՀՀ 01505307
Նախագահ՝	Տնօրեն՝
_____ *(ստորագրություն)*	_____ *(ստորագրություն)*
ԱՍՏԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
Կ.Տ.	Կ.Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 1

«21» 01 2020 թ.

N Ե-27 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ

Մենք՝ ներքոստորագրյալներս, ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանը և Կազմակերպության տնօրեն Վիկտոր Կատվալյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «21» 01 2020 թ. N Ե-27 պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 81.772.900 (ութսունմեկ միլիոն յոթ հարյուր յոթանասուներկու հազար ինը հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ ԳԱԱ	Կազմակերպություն
Նախագահ՝	Տնօրեն՝
(ստորագրություն)	(ստորագրություն)
ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

Հավելված 2

«21» 01 2020 թ.

N Ա-27 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը.

Հայոց լեզվի կառուցվածքի և գործառության ուսումնասիրություն, հայոց լեզվի պատմության, զարգացման միտումների ուսումնասիրություն, գրական արևելահայերենի և արևմտահայերենի քննություն, հայերենի խոսակցական ու բարբառային դրսևորումների ուսումնասիրություն, հայերենի և հնդեվրոպական ու այլ լեզուների փոխհարաբերությունների հետազոտում, ինչպես նաև տարատեսակ բառարանների ու տերմինարանների կազմում:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները.

Գիտական հետազոտություններն իրականացնել տեսական, փորձառական եղանակներով, համեմատական, վերլուծական, պատմահամեմատական, պատմական-նկարագրական, կառուցվածքային-նկարագրական մեթոդներով: Առանձին իրողություններ քննել լեզվաբանական աշխարհագրության, համեմատական և պատմական մեթոդներով, զուգաբանական-վիճակագրական և բառավիճակագրական սկզբունքների կիրառմամբ: Գիտահետազոտական աշխատանքները կատարել լեզվական նյութի համակողմանի քննությամբ, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ, գիտական պատշաճ մակարդակով կատարված արժեքավոր հետազոտություններով համալրել հայերենագիտության տարբեր ոլորտները: Գիտական արդյունքները ներկայացնել զեկուցումներում և գիտական հրապարակումներում:

4. Աշխատանքի բովանդակությունը.

ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում կատարվող գիտական հետազոտությունները ընդհանուր առմամբ ունեն հիմնարար բնույթ և կիրառելի են հայերենագիտության ու հայագիտության ոլորտներում: Ինստիտուտի գիտահետազոտական թեմատիկան ընդգրկում է չորս գիտական ուղղություններ՝ ա) արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, բ) հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, գ) հայ բարբառների ուսումնասիրություն, դ) ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» ուղղության շրջանակում հետազոտություններ են ընթանում հայերենի ուսումնասիրության տարբեր բնագավառներում՝ ընդգրկելով քերականական ու բառապաշարային համակարգերին վերաբերող արդիական և դեռևս ամբողջովին չլուսաբանված թեմաներ, որոնք միտված են իրողությունների նորովի մեկնաբանությանը, վերլուծությանն ու նկարագրությանը, հայ լեզվաբանական մտքի հետագա զարգացմանը:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» ուղղության շրջանակում հետազոտությունների նպատակն է լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխությունների ու դրանց օրինաչափությունների վերհանումն ու վերլուծությունը, հայերենի և այլ լեզուների բառապաշարային աղերսների քննությունը: Այդ առումով արդիական են գրաբարի բառապաշարի ձևաիմաստային խմբերի ու բառակազմական իրողությունների քննությունը, բառաքննական դիտարկումներն ու ստուգաբանությունները, ճյուղային տերմինաբանության պատմական քննությունը:

Կարևորվում են ձեռագիր բառարանների բառապաշարի հետազոտությունը, ձեռագրերի հիշատակարանների լեզվի ուսումնասիրությունը:

«Հայ բարբառների ուսումնասիրություն» ուղղության շրջանակում արդիական են տեսական բարբառագիտական խնդիրների արծարծումը, բարբառների բառապաշարի ու քերականական համակարգերի քննությունը, բարբառային միավորների պատմական ու համեմատական ուսումնասիրությունը, դեռևս չուսումնասիրված բարբառային միավորների հետազոտությունը: Կարևոր նշանակություն ունեն բարբառային նյութերի հավաքման ու թվայնացման, ՀԲԱ ծրագրով հավաքված նյութերի համալրման և թվայնացման աշխատանքները: Հետազոտությունների արդյունքները կնպաստեն լեզվի պատմության, բանագիտության ու ազգագրության տարբեր խնդիրների պարզաբանմանը:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» ուղղության շրջանակում ընդհանուր լեզվաբանական հայեցակետով կատարվում են գրաբարի իմաստային (թեմատիկ) առանձին խմբերի ուսումնասիրություն, հոլովական և խոնարհման համակարգերի ձևակառուցվածքային հետազոտում, հայերենի բայի եղանակի տիպաբանական քննություն, բառաքննական ու ստուգաբանական ճշգրտումներ, պատրաստվում է լեզվաբանական տերմինների առձեռն բառացանկ-բառգրքույկ, դիտարկվում են հայերենի և տարածաշրջանային հին ու նոր լեզուներ-ի, հայերենի և իտալերենի առնչությունները:

Կիրառական լեզվաբանության ուղղությամբ կատարվում են փորձառական հնչյունաբանական հետազոտություններ, դիտարկվում են համաբարբառների համակարգչային մշակման խնդիրները, շարունակվում են հայ մատենագրության համաբարբառների շտեմարանի կազմման աշխատանքները: Կատարվող աշխատանքները միտված են նպաստելու ժամանակակից համակարգչային լեզվաբանության նորագույն գաղափարների ու միջոցների օգտագործմանը, որոնց յուրացումը էական նշանակություն կունենա հայագիտության հետագա զարգացման համար:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Ընդհանուր ու համեմատական լեզվաբանության բնագավառում 2020 թ. գիտահետազոտական աշխատանքներն ընթանալու են հետևյալ թեմաների շրջանակներում.

– Բառաքննական և ստուգաբանական ճշգրտումներ և լրացումներ ստուգաբանական բառարանների մեջ.
– Շինությունների, շինարարությանը վերաբերող բառերի (գերան, սիւն, ձեղուն և այլն) ծագումնաբանական, իմաստային և կառուցվածքային քննություն.
– Լեզվաբանական նորագույն ուղղությունները և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները:
– Հայերենի բուն և արգելական հրամայականների պատմական փոխհարաբերությունը (շարունակելի).
– Ժամանակակից հայերենի և գերմաներենի բայի ձևաբանական դասակարգման տիպաբանություն.
– Հայերենի արաբական փոխառությունները՝ ըստ Ստ. Մալխասյանցի բառարանի (նյութերի հավաքում, մշակում և ընդհանուր բառացանկի համալրում).
– Հայերենի և շրջակա լեզուների պատմական և համեմատական ուսումնասիրություն (շարունակելի):

Կիրառական լեզվաբանության ուղղությամբ 2020 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

– Գրաբարի չթեքվող խոսքի մասերը.
– Հարցական նախադասությունները Հին Կտակարանի արևելահայերեն և արևմտահայերեն գրքերում.
– Կորպուսային լեզվաբանության խնդիրներ.
– Հնչերանգը հրապարակային խոսքում:

Շարունակվելու են «Հայ մատենագրության համաբարբառների շտեմարան»-ի կազմման /մուտքագրում, խմբագրում, սրբագրում/ աշխատանքները:

2. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» ծրագրի ուղղությամբ 2020 թ. կատարվելու են հետևյալ թեմաները՝

- Ղարաբաղի բարբառի հնչյունական համակարգի հնաբանությունները.
- 18-րդ դարի նույնանիշների ձեռագիր բառարանների ուսումնասիրություն (դարձվածային միավորներ).
- Հայերենի երաժշտության ոլորտի բառապաշարի քննություն (թարգմանական գրականություն. Աստվածաշունչ, Հին Կտակարան, Գիրք Ծննդոց, Ելից., Ղեւտ.).
- Բարբառային իրողությունները Ագաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկում.
- 13-րդ դարի բժշկարանների մասնագիտական բառապաշարի քննություն («Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ»).
- 5-րդ դարի ինքնուրույն գրականության բառապաշարի ձևաիմաստային խմբերի քննություն (Եղիշե).
- Հականիշ բառերի ոճական կիրառությունները Գ. Տաթևացու «Գիրք քարոզութեան» Ամառան հատորում.
- Ալբերտ Մեծի «Համառօտ հաւաքումն աստուածաբանական ճշմարտութեան» աշխատության նորաբանությունները.

3. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Հայ բարբառների ուսումնասիրության ուղղությամբ 2020 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- «Հայ բարբառագիտություն» ակադեմիական միհատորյակի ստեղծման աշխատանքներ. բարբառային հայերենի քերականական առանձնահատկությունները.
- Լեզվամտածողության տարբերակային արտահայտություններ հայերենի բարբառային բառապաշարում. *արևելյան խմբակցության բարբառներ.*
- Բուսանունները հայերենի բարբառներում (*թփեր*).
- Չուսումնասիրված բարբառային միավորների հետազոտություն (Արաբկիրի բարբառի լեզվական բնութագիրը, Ակնի բարբառի բառապաշարի ընդհանուր նկարագիրը (կից բառացանկերով), Համշենի բարբառի՝ Գուդաութի շրջանի խոսվածքների բառապաշարի ուսումնասիրություն).
- Նախիջևանի տարածքի բարբառային միավորների ընդհանուր բնութագրերը.
- Բարբառային աղյուսակների կազմում՝ ըստ Գ. Ջահուկյանի նշած բարբառային հատկանիշների (Գեղարքունիքի, Վայոց ձորի, Կոտայքի մարզեր)

Շարունակվելու են հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի թվայնացման աշխատանքները (քերականական զուգաբանությունների մուտքագրում):

3. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Արդի արևելահայերենի ուսումնասիրության ուղղությամբ 2020 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- Վիեննայի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը (19-րդ դարի առաջին կես).
- Շարահյուսական նորմի դրսևորումները կապակցության եղանակների ու միջոցների գործառության ոլորտում.
- Երգիծանքի լեզվաոճական միջոցների քննություն Նշան Պեշիկթաշլյանի վեպերում.
- Հատկական փոխառություններ.
- Աշխարհաբարի բառակազմության ուսմունքի ձևավորման հիմքերը.
- Ուրոլոգիական տերմինների տառադարձությունը.
- Տեքստի կապակցման միջոցները արդի հայերենում.
- «Հագուստ» իմաստային (թեմատիկ) խմբի քննություն բարբառներում:

Բառարանագրության ոլորտում շարունակվելու են աշխատանքները «Արդի հայերենի նորաբանությունների բառարանի» կազմման ուղղությամբ. («Նոր բառերի» Զ պրակի նյութերի հավաքում):

Արդի արևմտահայերենի ուսումնասիրության բնագավառում 2020 թ. կատարվելու են հետևյալ թեմաները.

- Գրական արևմտահայերենի և գրական արևելահայերենի ուղղախոսական համակարգերը և նրանց մերձեցման ուղիները.
- Արևմտահայերենի պարզ նախադասության հնչերանգը.
- Արևմտահայերենի նախդրավոր կազմությունները.
- Միայն արևմտահայերենին հատուկ բառաշարքի քննություն.
- Նորաբանությունները արևմտահայ մամուլում («Հորիզոն» պարբերական).
- Արևմտահայերենի չթեքվող խոսքի մասերի քննություն.
- Արևմտահայերենի տաղաչափության խնդիրների հետազոտություն. Մաթեոս Զարիֆյանի ստեղծագործությունների տաղաչափական առանձնահատկությունները.
- Արևմտահայերենի արաբական փոխառությունների ծագումնաբանական քննություն:

Կազմակերպության
տնօրեն՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 3

«21» 01 2020 թ.

N Ն-27 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ*

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի

հ/հ	Իրականացվելիք միջոցառման անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները, դրանց որակական և քանակական ցուցանիշները	կատարման ժամկետները	պահանջվող գումարը (հազար դրամ)
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	Գիտական նյութի դասակարգում, օրինչափությունների բացահայտում	հունվար-մարտ	
2	Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր		Ծանոթացում տեսական գրականությանը	Տեսական և կիրառական բնույթի եզրահանգումներ և առաջարկություններ		
3	Հայ բարբառների ուսումնասիրություն		Նյութերի մշակում, քննարկում, պլանավորում			
4	Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ			մոտ 20 գիտական հրապարակում		16354.5
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	Գիտական նյութի դասակարգում, օրինչափությունների բացահայտում	կիսամյակի վերջ	
2	Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր		Ծանոթացում տեսական գրականությանը	Տեսական և կիրառական բնույթի եզրահանգումներ և առաջարկություններ		
3	Հայ բարբառների ուսումնասիրություն		Նյութերի մշակում, համակարգում, քննարկում,			
4	Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ		Շարադրանք	մոտ 30 գիտական հրապարակում		20443.2
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում	Գիտական նյութի դասակարգում, օրինչափությունների բացահայտում	հոկտեմբեր	
2	Հայոց լեզվի պատմական զարգացման		Ծանոթացում տեսական գրակա-	Գիտական		

* *Իրականացվելիք միջոցառումները ներկայացնել եռամսյակային փուլերով*

	հարցեր 3 Հայ բարբառների ուսումնասիրություն 4 Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ		նությանը Նյութերի մշակում, համակարգում, քննարկում, Շարադրանք	հետազոտությունների արդյունքների ներկայացում զեկուցումներում և հոդվածներում մոտ 80 հրապարակում		20443.2
1	Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր 2 Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր 3 Հայ բարբառների ուսումնասիրություն 4 Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ	Տե՛ս Աշխատանքի բովանդակությունը, նաև անհատական պլանները	Նյութերի հավաքում Ծանոթացում տեսական գրականությանը Նյութերի մշակում, համակարգում, քննարկում, Շարադրանք	Գիտական նյութի դասակարգում, օրինչափությունների բացահայտում տեսական և կիրառական բնույթի կարևորագույն արդյունքների և ձեռքբերումների ամփոփում մոտ 130 գիտական հրատարակություն	տարեվերջ	24532.0
	Ընդամենը՝					81772.9

Կազմակերպության տնօրեն՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված 4
«21» 01 2020 թ.
N 21-27 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ
« Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում » ծրագրի

հազար դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	77761.2	*15552.2*	*19440.3*	*19440.3*	*23328.4*
2	տնտեսական և այլ ծախսեր	4011.7	*802.3*	*1002.9*	*1002.9*	*1203.5*
ԸՆԴԱՄԵՆԸ		**81772.9**	**16354.5**	**20443.2**	**20443.2**	**24532.0**

Կազմակերպության տնօրեն՝ _____ Վիկտոր Կատվալյան
(ստորագրություն)

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝ _____ Ս.Սոլակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 4.1

«21» 01 2020 թ.

N Ռ-27 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ †

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը, առանց ԱԱՀ (հազար դրամ)
1	Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝	2250.0
	էլեկտրաէներգիայի ծառայություն	*1500.0*
	գազի ծառայություն	
	ջրամատակարարման ծառայություն	*200.0*
	կապի ծառայություն	*550.0*
	աղբահանություն	
2	Գույք	
3	Սարքեր և սարքավորումներ	
4	Նյութեր	122.9
5	Գործուղումներ	
6	Գիտական միջոցառումների կազմակերպում	
7	Արշավախմբեր	
8	Հրատարակման ծախսեր	938.8
	.....	700.0
Ընդամենը		**4011.7**

Կազմակերպության տնօրեն՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ

(ստորագրություն)

Կազմակերպության

գլխավոր հաշվապահ՝ _____ ՍՈՆԱ ՍՈԼԱԿՅԱՆ

(ստորագրություն)

Կ.Տ.

---

* *Բուհերում իրականացվող ծրագրերի համար չի լրացվում*

Հավելված 5

«21» 01 2020թ.

N Ա-27 պայմանագրի

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի

Հ/հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Պաշտոն	Գիտական աստիճան	Աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը* (հազար դրամ)
1	Կատվալյան Վիկտոր Լիպարիտի	տնօրեն, բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող	բ.գ.դ.	320.0
2	Հովհաննիսյան Նազիկ Գարրիի	տնօրենի տեղակալ գիտության գծով, ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	260.0
3	Աբրահամյան Անահիտ Արտուտիկի	գիտական քարտուղար, ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	200.0
4	Հովհաննիսյան Լավրենտի Շահենի	տնօրենի խորհրդական, գլխավոր գիտաշխատող	բ.գ.դ.	160.0
5	Սոլակյան Սոնա Վարդգեսի	հաշվապահ		150.0
6	Բաղալյան Մարինե Միքայելի	գործավար-արխիվարիուս, կադրերի տեսուչ /մասնագետ/		150.0
7	Ասոյան Թաթուլ Արտիկի	բաժնի վարիչ, գիտաշխատող	բ.գ.թ.	50.0
8	Պապիկյան Սիլվա Վարդանի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.0
9	Թելյան Լեոնիդ Գուրգենի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	46.0
10	Բարսեղյան Ամալյա Գալուստի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.0
11	Սուքիասյան Հենրիետա Վահրամի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	47.0
12	Ներսիսյան Վարսիկ Արմենի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	48.0
13	Առաքելյան Կարինե Լևոնի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.75
14	Ղամոյան Լուսինե Աշոտի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.75
15	Սաֆարյան Տաթևիկ Վազգենի	գիտաշխատող	բ.գ.թ.	93.75
16	Համբարյան Լուսինե Արսենի	կրտսեր գիտաշխատող		48.0

* *Աշխատավարձը՝ ներառյալ եկամտային հարկը, չպետք է ցածր լինի, քան Հայաստանի Հանրապետությունում սահմանված նվազագույն աշխատավարձը*

17	Մխիթարյան Գայանե Մելիսի	բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	100.0
18	Գրիգորյան Սուսաննա Մակարի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	47.0
19	Թադևոսյան Հասմիկ Միխայիլի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.75
20	Խաչատրյան Վալենտին Մեխակի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.75
21	Սիրունյան Տիգրան Ղուկասի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	48.0
22	Բառնասյան Ջեմմա Աղվանի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.0
23	Գևորգյան Գայանե Գերասիմի	ավագ գիտաշխատող	բ.գ.դ.	47.0
24	Խաչատրյան Հասմիկ Ռաֆիկի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.0
25	Մեսրոպյան Հայկանուշ Հովսեփի	առաջատար գիտաշխատող	բ.գ.դ.	94.0
26	Մկրտումյան Անահիտ Մամիկոնի	գիտաշխատող		90.6
27	Սահակյան Նինա Գրիգորի	գիտաշխատող		93.0
28	Վարդանյան Արտակ Վարդանի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	93.0
29	Խառատյան Մելանյա Հովիկի	ծրագրող-հետազոտող		93.0
30	Շուքուրյան Մետաքսյա Վաչագանի	ավագ լաբորանտ-հետազոտող		48.0
31	Հովսեփյան Լիանա Սամվելի	բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող	բ.գ.դ.	120.0
32	Ղուկասյան Սևակ Վազգենի	ավագ գիտաշխատող	բ.գ.դ.	94.0
33	Խաչատրյան Օֆելյա Մուշեղի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	90.6
34	Գրիգորյան Գայանե Գրիգորի	գիտաշխատող	բ.գ.թ.	93.0
35	Գուլզազարյան Լիդա Անդրանիկի	գիտաշխատող		90.6
36	Հովհաննեսյան Հայկանուշ Անուշավանի	գիտաշխատող		90.6
37	Մովսեսյան Դշխուհի Սուրենի	գիտաշխատող		90.6
38	Հակոբյան Ֆրիդա Արտաշեսի	գիտաշխատող	բ.գ.թ.	93.75
39	Օհանջանյան Աննա Դմիտրիի	ավագ լաբորանտ-հետազոտող		90.6
40	Համբարձումյան Վազգեն Գուրգենի	բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող	բ.գ.դ.	90.6
41	Սիմոնյան Նեկտար Մամիկոնի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	94.0
42	Սուվարյան Արծվիկ Սաղաթելի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	47.0

43	Ավետյան Սարգիս Ռուդիկի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	48.0
44	Դալալյան Տորք Սամվելի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	48.0
45	Սարգսյան Մերի Արթուրի	գիտաշխատող	բ.գ.թ.	93.75
46	Միքայելյան Սոնա Արայի	գիտաշխատող	բ.գ.թ.	93.75
47	Բաղրամյան Սեդա Եղիայի	ավագ լաբորանտ-հետազոտող		93.75
48	Պողոսյան Ամալյա Արմենի	ավագ լաբորանտ-հետազոտող		93.75
49	Սարգսյան Արտեմ Եղիշի	բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող	բ.գ.դ.	110.0
50	Թոխմախյան Ռոբերտ Մարկոսի	առաջատար գիտաշխատող	բ.գ.դ.	94.0
51	Տիոյան Սուսաննա Կարապետի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	94.0
52	Խաչատրյան Արամ Սամվելի	գիտաշխատող	բ.գ.թ.	48.0
53	Ֆչնկջյան Անի Ավադիսի	գիտաշխատող	պ.գ.թ.	47.0
54	Միշոյան Սոսի Հրանդի	կրտսեր գիտաշխատող		48.0
55	Մարաշլյան Հարութ Գևորգի	կրտսեր գիտաշխատող		93.75
56	Խաչիբաբյան Նաիրա Պարսամի	ավագ լաբորանտ-հետազոտող		48.0
57	Գալստյան Անահիտ Սերյոժայի	բաժնի վարիչ, ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	100.0
58	Մուշեղյան Արմեն Հենրիկի	ավագ գիտաշխատող	բ.գ.թ.	90.6
59	Սահակյան Ալա Գրիգորի	գիտաշխատող		91.0
60	Հովսեփյան Գայանե Կառլենի	գիտաշխատող		91.0
61	Սարգսյան Նռանե Մանվելի	կրտսեր գիտաշխատող		93.75
62	Հարությունյան Էմմա Աղասու	գրադարանի վարիչ		92.0
63	Արևշատյան Սևակ Սուրիկի	հասարակայնության հետ կապերի և էլ. կայքի պատասխանատու		93.75
64	Գրիգորյան Վազգեն Սերոբի	տնտեսվար		90.6
65	Կատվալյան Միտյա Լիպարիտի	վարորդ, ցրիչ		140.0
66	Հարությունյան Ստեփան Ավանեսի	փականագործ		90.6
67	Հովհաննիսյան Համլետ Կարապետի	պահակ		110.0
68	Համբարձումյան Անահիտ	հավաքարար		90.6

	Հրաչիկի			
69	Խաչատրյան Լուսինե Մնացականի	հավաքարար		93.75
Ընդամենը				6480.1

Կազմակերպության
տնօրեն՝ _____ ՎԻԿՏՈՐ ԿԱՏՎԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Կազմակերպության
անձնակազմի կառավարման
բաժնի պետ՝ _____ ՄԱՐԻՆԵ ԲԱԴԱԼՅԱՆ
(ստորագրություն)

Կ.Տ.